ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

Գործնական որհուրդներ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Ինտելեկտուալ խանգարումներ ունեցող երեխաները, ինպես բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ ուսուցչի աշխատանքը կոչում է՝ **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին**: Դասավանդել ինտելեկտուալ խանգարումներ ունեցող սովորողին նշանակում է ունենալ հիանալի հնարավորություն այդ երեխայի կյանքում հսկայական փոփոխություններ կատարելու համար:

1. ԴԱՍԱՐԱՆ

Դասարանում կիրառվող լրացուցիչ օժանդակ միջոցները և ծառայություններն ուսուցման գործընթացը դարձնում են առավել արդյունավետ և սովորողին թույլ են տալիս ձեռք բերել գիտելիքներ, փորձ կամ հմտություններ, ինչպես նաև ստանալ հավասար կրթություն այլ սովորողների հետ առավելագույն հնարավոր չափով (հատուկ մանկավարժի ծառայություն, խոշորացույց, հաշվիչ, ձայնագրիչ, մանր մոտորիկայի համար նախատեսված սարքեր՝ ստեղնաշար, հարմարեցված գրիչ և այլն):



2. ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Բոլոր այն միջոցները, որոնք կիրառվում են կրթական միջավայրում և թույլ են տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտին հնարավորության սահմաններում կրթություն ստանալ իր հասակակիցների հետ, ուսումնական գործընթացի հարմարեցումներ են: Որպեսզի ուսումնական գործընթացը լինի մատչելի և հասանելի ինտելեկտուալ խանգարումներ ունեցող սովորողների համար, այն պետք է հնարավորինս հարմարեցնել և համապատասխանեցնել նրանց ֆիզիկական, մտավոր, սոցիա-լական և հուզական կարիքներին: Հարմարեցումները կարող են լինել 5 ուղղություններով՝

- **պլանավորում** (սովորողին առաջադրանքը կամ քննությունը ավարտելու համար

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP

լրացուցիչ ժամանակ տրամադրելը, առաջադրանքների քանակը նվազեցնելը և այլն),

- **միջավայր** (սովորողի աշխատանքը փոքր խմբում կամ զուգընկերոջ հետ կազմակերպելը և այլն),
- **ուսումնական նյութ** (սովորողին ուսուցչի կողմից տպագրված նյութեր կամ ձայնագրված դասեր տրամադրելը, ուսումնական նյութը փոքրիկ, հեշտ յուրացվող մասերի տրոհելը, գրավոր պատասխանի փոխարեն բանավոր պատասխանի հնարավորություն տալը և այլն),
- **հրահանգ** (օրինակ՝ դասը կամ հրահանգը փոքր քայլերի բաժանելը, հրահանգը կրկնելը և այլն),
- **սովորողի պատասխան** (սովորողին բանավոր կամ համակարգչով պատասխանել թույլ տալը և այլն):

3. ՏԵՍՈՂԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐ

Ինտելեկտուալ խանգարումներ ունեցող սովորողները ավելի լավ սովորում են այն դասերին, որոնց ժամանակ կիրառվում են դիդակտիկ նյութեր և պարագաներ: Առարկաների, նկարքարտերի, գծապատկերների կիրառումը կարող է մեծապես բարելավել նրանց ուսումնական փորձառությունը և օգնում է ավելի հեշտությամբ կենտրոնանալ նյութի վրա: Տեղեկատվությունը ներկայացրեք տարբեր ձևաչափերով՝ բաշվող տպագիր նյութեր, աշխատանքային թերթիկներ, տեսանյութեր՝ սովորողների ուսուցման բազմազան ոճերը բավարարելու նպատակով:

4.ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ինտելեկտուալ խանգարումներ ունեցող սովորողները սովորում են՝ առարկաների հետ «պրակտիկ» գործողություններ կատարելով: Նրանք ավելի լավ են սովորում, երբ մատուցվող տեղեկատվությունը հստակ է և դիտարկելի: Այս դեպքում ուսուցման ամենաարդյունավետ մեթոդը կլինի այն, որ բանավոր հրահանգներ տալուց բացի ցուցադրեք այն, ինչի մասին խոսում եք:

5. ԱՐԱԳ ԵՎ ԴՐԱԿԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Ինտելեկտուալ խանգարումներ ունեցող սովորողին անմիջապես հետադարձ կապ տալը շատ կարևոր է, քանի որ նրանց անհապաղ արձագանք է իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: Եթե հետադարձ կապ չի տրվում, ապա սովորողները դժվարանում են կապեր ստեղծել պատճառի և հետևանքի միջև: Դրական հետադարձ կապը կխրախուսի սովորողին շարունակել իր փորձերը: Եթե սովորողը յուրացրել է նյութը կամ հասել է նպատակին, ապա կարևոր է խրախուսել նրան, օրինակ՝ պարգևատրել կամ ծափահարել:

6. ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում՝ Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: